


ԵՐԵՎԱՆ ԲԱՂԱՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԹԱՆԳԱՐԱՆ



ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԵՎԱՆ 2009

ՀՏԴ 941 (479.25):06
ԳՄԴ 63.3 (2Հ)
Ե-12

Խմբագիրներ՝ Ա. Սարգսյան
Լ. Ամիրջանյան
Յ. Սարգսյան

Ե-12 Երևան 2: Մայրաքաղաքի պատմության հիմնահարցերին նվիրված գիտական
նստաշրջանի նյութեր. Եր.: Երևան քաղաքի պատմ. թանգարան, 2009.–168 էջ:

Երևանի պատմության խնդիրներին նվիրված Երևան 2 ժողովածուում տեղ
են գտել Երևանի մի շարք գիտական ու կրթամշակութային հաստատութ-
յունների մասնագետների հոդվածները, որոնք նորովի են մոտենում մայրա-
քաղաքի պատմության բազմաթիվ ու բազմապիսի խնդիրներին:

Երևանի պատմության հիմնահարցերին նվիրված առաջին ժողովածուում
լույս է տեսել 2006թ-ին, ներկա աշխատանքը նախորդի բնականոն շարու-
նակությունն է:

Աշխատանքը նախատեսված է մասնագետների ու ընթերցող լայն հասարա-
կայնության համար:

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 978 – 9939 – 9002 – 0 – 9


Բ.Գ. ԵՐԻՃՅԱՆ, Ա. Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Բ.Զ. ՉԱՍՊՈՐՅԱՆ
ՀԱԻ

**Վահագնի-1 քարեդարյան բացօթյա հնավայրի
ուսումնասիրության նախնական արդյունքները**

Վահագնի քարեդարյան հնավայրը հայտնաբերվել է 2000 թ. ՀԱԻ-ի քարեդարյան հուշարձանները ուսումնասիրող արշավախմբի մասնակից Բ. Գասպարյանի կողմից, նույնամուն թաղամասի տարածքի կառուցապատման արդյունքում՝ ելնելով տեղանքը հնագիտական հետախուզման ենթարկելու անհրաժեշտությունից: Հուշարձանը գտնվում է Երևան քաղաքի հյուսիսարևմտյան մատույցներում, Երևան – Աշտարակ մայրուղուց ծախ՝ այժմյան Վահագնի թաղամասի տարածքում: Տեղանքը իրենից ներկայացնում է (տես տոպոհանույթը) Արարատյան դաշտի նախալեռնային գոտու ցածրադիր բլրաշարի շղթաներից մեկը, որի մակերևույթը տեղ-տեղ կտրտված է ջրատարների և ժամանակակից գետակների հուներով (GPS: N40°13'09,43" E44°26'54,61", alt. 1113): Հնավայրի տարածքը անջրդի էր, բուսածածկ չոր՝ տափաստանային, աղքատիկ բուսականությամբ: Ներկայումս այն ամբողջովին կառուցապատված է:

Հնավայրից հավաքված հնագիտական նյութերը բացառապես վերգետնյա են: Դրանց կուտակումներ բացահայտվել են երկու առանձին կետերում, որոնք ներկայացվում են պայմանական տեղամասերով՝ 1-ին և 2-րդ: Երկու տեղամասերից հավաքված քարե առարկաների հունքի տեսակը, հողմնահարության ու պահպանման վիճակները գրեթե նույնն են: Ցավոք, հնավայրի տարածքում հետախուզական փոսորակներ չեն իրականացվել՝ հնագիտական շերտերի առկայությունը փաստագրելու համար, որն այժմ պարզապես անհնար է:

1-ին տեղամաս (ընդհանուր մակերեսը 30 քառ. մետր): Այստեղից հավաքված քարե առարկաների համալիրը բաղկացած է թվով 25 քարե իրից, այդ թվում՝ 17 գործիք (4 միջուկային), անկանոն հարդարմամբ և առանց հարդարման 7 ցլեպ ու շեղբ և մեկ կլորակուն գետաքար, որն օգտագործվել է որպես ջարդիչ (Աղ. 1, 20): Բացի քարե գործիքներից հայտնաբերվել է նաև միջնադարյան խեցանոթների երեք բեկոր, որոնք քարե առարկաների հետ որևէ առնչություն չունեն (Աղ. 1, 18): Խեցեղենի մի բեկորից պատրաստվել է շրջանածև՝ մեջտեղում անցք ունեցող մի ակ, որի միայն կեսն է պահպանվել (Աղ. 1, 19):



Վահագնի-1 քարիդարյան բացօթյա հնավայրի տեղանքը

2-րդ տեղամաս (ընդհանուր մակերեսը 65 քառ. մետր): Այստեղից հավաքվել է 116 իր: Քարի համալիրը բաղկացած է 112 քարե առարկայից, որոնցից 33-ը գործիք, 28-ը ցլեպ և շեղբերի բեկորներ են՝ էլեմենտար հարդարման հետքերով, 34-ը ցլեպների և շեղբերի բեկորներ առանց երկրորդական մշակման, 17-ը բեկոտման ու հատման ժամանակ առաջացած մանր կտորներ և արտադրական թափոն: Հավաքածուում կան խեցանոթների 4 բեկոր, որոնք պատկանում են ուշ միջնադարյան ժամանակաշրջանին:

Այսպիսով, Վահագնի-1 բացօթյա հնավայրի երկու տեղամասերից ընդհանուր առմամբ հավաքվել է 141 հնագիտական իր, այդ թվում 137 քարե առարկա, խեցանոթների 7 բեկոր և մեկ գետնաքար: Քարե առարկաների վերլուծությունը երկու տեղամասերի համար ներկայացնում ենք միասին:

Հումք – քարե իրերը բացառապես պատրաստված են տարբեր տեսակի և որակի վանակատե հումքից: Գերակշռում են սև, անթափանց վանակատե իրերը, կան եզակի նմուշներ կարմիր և թափանցիկ տարատեսակներից: Հողմնահարվածությունը (պատինա) մեծ մասի վրա անմշան է, միայն չորս օրինակ ունի զգալի մոխրագույն պատինա՝ մակերևույթ: Իրերը, ընդհանուր առմամբ, ունեն փոքր չափեր, ամենամեծ գործիքի երկարությունը չի անցնում 3 սմ-ից, գործիքների մեծ մասն ունեն 1-2 սմ, իսկ ամենափոքրերը՝ 0,5-0,8 սմ երկարություն: Գործիքների ու պատրաստուկների 80%-ը ենթարկվել է արհեստական բեկոտման և հատման:

Վահագնի-1-ի քարե իրերի համալիրը ունի հետևյալ տեխնիկա-մորֆոլոգիական բնութագիրը.

1. **Տեխնիկական առումով** քարե առարկաների համալիրի բնութագիրը չափազանց բարդ է, քանի որ միանման չափանիշներ ունեցող առաջնային բեկոտման արտադրանքը իսպառ բացակայում է: Այստեղ առկա են սահմանափակ քանակությամբ միկրոշեղբեր (Աղ. 1, 9) և հաստ ցլեպների հենքի վրա միկրոշեղբերի ստացման համար պատրաստված միջուկներ (Աղ. 1, 2): Առկա է նաև պրիզմատիկ շեղբի մի բեկոր (Աղ. 2, 14), սակայն իսպառ բացակայում են որոշակի տեխնիկա ներկայացնող միջուկները: Իրենց հերթին՝ ցլեպների և շեղբերի ավելի քան 80%-ը բեկոտված են, և բոլոր գործիքները պատրաստված են բեկոտված պատրաստուկների հենքի վրա:

2. **Տեխնոլոգիական առումով** գործիքների պատրաստումը կատարվել է հիմնականում երկու եղանակով՝ կանխատեսված հատման և մանր եզրագծային թթացնող հարդարմամբ: Օգտագործվել են հատման բոլոր ձևերը՝ լայնակի, երկայնակի և հարթ ու բազմակի հատման միջոցները: Հարդարումը կատարվել է մեծ մասամբ ատամնավոր-փոսիկավոր ռետուշով: Գործիքների հիմնական մասը կրում է տարրական հարդարում, երկու գործիք (Մերդիր, դնչիկավոր գործիք, Աղ. 1, 17, Աղ. 3, 11) պատրաստվել են մեկ կամ երկկողմանի բեկոտմամբ: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում հավաքածուում առկա գործիքի բեկորի հարդարման եղանակը, որը հիշեցնում է, այսպես կոչված, «չայոնյուի տիպի» գործիքները (Աղ. 2, 11): Նման հարդարման ոճ (զուգահեռ հանույթներով ռետուշ) Հայաստանում հանդիպել է առաջին անգամ Վահագնի-1 համալիրում: Հարդարումը կատարվել

է շեղքի երկու կողերից (մեջքից դեպի փորի մասը)՝ աշխատանքային մասի ձևավորման նպատակով: Հարդարման եզակի և դասական մնուչ լինելու պատճառով մենք այն անվանել ենք հարդարման եղանակի Վահագնիի տիպ: Հետագայում մնան օրինակներ կամ մնան գործիքներ հիշեցնող առարկաներ հայտնաբերվել են մասնաշախարհի և տարածաշրջանի նախակերամիկական նեոլիթի տարբեր փուլերին վերագրվող հուշարձաններից: Նման իրեր հայտնի են Ենոքավան-1 և Քմլո-2 քարայրներից¹, Քուչակ-1 ժայռածածկից, Գեղարուտ-1 հնավայրից², Արուճ-1 կայանից, Չայոնյու թեփեսի³, Քաֆեռ Հույուկ, Բոյ թեփե⁴ բնակատեղիներից և այլն: Վերջիններիս համար առանձնացվել է գործիքների յուրօրինակ և առանձնակի տիպ, որը կոչվել է «չայոնյուի տիպի» գործիք:

3. Տիպաբանական առուժով ամբողջական հարդարմամբ ձևավորված գործիքները շատ քիչ են: Առանձնանում են ժայռային քերթիչները (Աղ. 1, 10-11, Աղ. 3, 4), ներդիրի մեկ օրինակը (Աղ. 1, 5), ունչիկավոր գործիքը (Աղ. 1, 17), կլոր քերթիչը (Աղ.3, 6), թեփուկավոր գործիքների դասական մնուչները (pièce écailée) (Աղ. 1, 1; Աղ. 2, 15), մուստերյան տիպի դրերի օրինակները (tranchet) (Աղ.1, 16; Աղ.2, 16) և մի քանի ատիպիկ միկրոլիթյան ձևեր (սեզմենտ և սեղան) (Աղ. 2, 3, 6-7):

4. Մորֆոլոգիական տեսակետից համալիրն առանձնանում է գործիքների գերակշռող մասի վերափոխման և ինովացիայի ենթարկման երևույթով: Հետաքրքիր է այն որ, որպես կանոն, վերափոխվել են ոչ թե պատրաստուկները, այլ պատրաստի գործիքները:

Ներկայացված վերլուծությունը թույլ է տալիս հանգել հետևյալ եզրակացությունների.


1. Միջուկների իսպառ բացակայությունը, պատրաստուկների տարատեսակությունը ու ստանդարտիզացման զրոյական ցուցանիշը հնարավորություն չի տալիս բնորոշել համալիրի ջարդման տեխնիկան:
2. Կիրառված տեխնոլոգիական տարրերի բազմազանությունը և նորագույն ռետուլման եղանակի առկայությունը, տիպական գործիքների եզակի մնուչներով ներկայացվածությունը համալիրին տալիս է հնաբանական բնույթ:
3. Առաջին հայացքից թվում է թե համալիրը պետք է վերագրել մեզոլիթյան մշակույթին, սակայն Վահագնի-1 հնավայրի տեղը Բ. Երիցյանի կողմից մշակված Հայաստանի քարի դարի պարբերացման համակարգում կարելի է դիտարկել որպես նեոլիթյանից արիստեոլիթյան համալիրներին անցման ժամանակաշրջանի մի տարբերակ:

¹ Chataigner Ch., Arimura M., Gasparyan B., Les Dassiers d'archéologie, 2007, n.321, p.30-35.

² Петросян А., Гаспарян Б. и др., Предварительные результаты изучения протонеолитической стоянки Гехарот-1 (Апаран), Հայ ազգաբանության և հնագիտության խնդիրներ-3, 2007, էջ 12-21:


³ Braidwood L.S., Braidwood R.J., The Eighth Mill. B.C Site at Çayönü: its Chipped and Ground Stone Industries and Faunal Remains, 1982, p.42-46., Caneva I., Conti A.M., Lemorini Ch., Zampetti D., The Lithic Production at Çayönü: a Preliminary Overview of the Aceraamic Sequence, 1994, p.253-266., Özdoğan A., Neolithic in Turkey, Çayönü, 1999, p35-63.

⁴ Balkan-Atli N., La neolithisation de l'Anatolie, 1994. p. 68-105.




Աղյուսակ-1

1. Թեփուկավոր գործիք (pièce écaillée), 2. միջուկանման գործիք, 3, 4. դրանման գործիքներ, 5. մանգաղի ներդիր, 6. բեկոտված ցլեա, 7. միջնամասային կտրիչ (bec), 8. ատամնավոր գործիք, 9. միկրոշեղք, 10, 11. քերիչներ, 12. երկփոսիկավոր գործիք ցլեպի վրա, 13. սայր, 14. միջուկային գործիք, 15, 16. դրեր, 17. դնչիկավոր գործիք, 18. խնցուլ բեկոր, 19. ակ, 20. գետաբարե ջարդիչ:



Աղյուսակ-2

1,2. Փոսիկավոր գործիքներ, 3. ատամնավոր գործիք, 4,5. ռետուշով հաստացած գործիք (tranchet), 6,7,10. սեգմենտներ, 8. կտուցավոր գործիք, 9. դնչիկավոր գործիք, 11.«չայոնյուխ տիպ» հիշեցնող գործիք, 12. սայր, 13. ատամնափոսիկավոր գործիք, 14. շերքի բեկոր, 15. թեփուկավոր գործիք (pièce écaillée), 16,18. դրեր (tranchet), 17.անկյունային կտրիչ:



Աղյուսակ-3

1. Կտցավոր գործիք, 2. գործիքի բեկոր բարակեցված հիմքով, 3. գործիքի բեկոր 3 կտրվածքով, 4. քերթիչ, 5. աղեղնային հանույթով կտրիչ (à chanfrein), 6. կլոր քերթիչ, 7. փոսիկավոր-ատամնավոր գործիք, 8. սայր, 9. միջնամասային կտրիչ (bec), 10. տրանշե, դուր, 11. երկակի քերիչ հատվող կողերով: